ՍՅՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

Ա.Հ.ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ

Հայաստանը Արշակունյաց հարստության հաստատման ժամանակ բաժանված էր 120 ռազմավարչական միավորների՝ ստրատեգիաների: Տարածքային առումով դրանք հիմնականում համընկել են հայկական գավառներին: Այդ արքայատոհմի կառավարման շրջանում (66 - 428թթ.) երկրում գոյություն ունեցող դրությունը օրինականացվել է: Արդեն իսկ առաջին Արշակունի թագավորի կողմից այն համակարգվել է[1] և հետագայում արտացոլվել է «Աշխարհացույց»-ում: Նրանում առավել մանրամասն ներկայացվել են Հայ Արշակունիների պետության՝ Մեծ Հայքի վարչական բաժանումը և այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել այդ հարստության անկումից հետո[2]. Ըստ «Աշխարհացույց»-ի՝ Մեծ Հայքը բաժանվել է 15 նահանգների (աշխարհների): Դրանցից մեկն էր Սյունիքը. «Իններորդ աշխարհ Սիւնիք, ընդ մէջ կալով Երասխայ, եւ Արճախայ, յելից Այրարատոյ, ունի գաւառս երկոտասան. զԵրնջակ, զՃահուկ, զՎայոց ձոր, զԳեղաքունիք հոմանուն ծովովն, զՍոթս, զԱղահէճ, զՃղուկն, զՀաբանդ, զԲաղս, զՁորս, զԱրեւիս, զԿովսական, հոմանուն գետովք մինչև ցՆախկորգևան քաղաք և անցյան իւր, եւ Աղուան (իմա՝ Աղւանոյ) գետ: Լինի ի նմա մուրտ եւ վերերի եւ նուռն ազնիւ, եւ ամուր տեղիք»[3]:

Աշխարհագրական առումով Սյունիքը զբաղեցրել է բավական ընդարձակ տարածք՝ Սևանա լճի ավազանը, և դեպի հարավ-արևելք՝ ընդհուպ մինչև Աղավնո գետն ընկած հողերը: Հյուսիսում Սյունիքի սահմանն անցել է Սյունյաց լեռների հյուսիսային հատվածի ջրբաժան բարձրություններով, իսկ հարավ-արևմուտքում՝ Վայքի լեռնաշղթայով և դեպի հարավ ձգվող լեռներով՝ մինչև Արաքս[4]: Այդ ժամանակաշրջանում երկրամասը բնակեցված է եղել հայերով, որոնք խոսել են հայերենի տեղական բարբառով: Այդ մասին վկայում է Ստեփանոս Սյունեցին (VIIIդ.). «Եւ դարձեալ պէտք լեզուիդ գիտելն ըզբովանդակ զբառսն զեզերականս, որպէս զԿորճայն եւ զՏայեցին եւ զԽութայինն եւ զՉորրորդ-Հայեցին եւ զՍպերացին եւ զՍիւնին եւ զԱրցախայինն, այլ ոչ միայն զՄիջերկրայսն եւ զոստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան, այլ եւ աւգտակարգ ի պատմութիւնսն, զի մի վրիպեսցի անընդել գոլով լեզուացն»[5]:

Աշխարհացույցյան Սյունիքի սահմանները զգալիորեն տարբերվել են նախկինից, որոնք սահմանափակված էին Սևանա լճից դեպի հարավ-արևելք

---

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, с. 391, 433-434.

[2] Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Ե., 1963, էջ 21-26:

[3] Նույն տեղում, էջ 109:

[4] Նույն տեղում, տե՛ս քարտեզը:

[5] Տե՛ս Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Пр., 1915, с. 187. Ողջ միջնադարի ընթացքում այդ երկրամասը բնակեցված է եղել բացառապես հայերով: Կան նաև դա հաստատող այլ գրավոր տվյալներ: Իրենց հերթին այդ են վկայում տեղանունները, ճարտարապետական հուշարձանները, ինչպես և այլ նյութեր:

ընկած տարածությամբ՝ արտացոլելով նահանգի ավելի հին դրությունը, որն ընդգրկել է բավական երկար ժամանակահատված: Այս տեսակետը հիմնավորվում է պատմական ավանդությամբ, որը հանդիպում է Մովսես Խորենացու երկում. «Իսկ Գեղամ յետ ամաց անցանելոյ ծնաւ զՀարմայ յԱրմաւիր, և թողեալ զՀարմայ յԱրմաւիր հանդերձ որդւովք բնակել, և ինքն գնաց զմիւս լերամբ արևելյան հիւսիսոյ, յեզր ծովակի միոյ: Շինէ զեզր ծովակին, և թողու անդ բնակիչս և յիր անուն և սա զլեառնն անուանէ Գեղ, և զշէնսն՝ Գեղարքունի, որով կոչի և ծովն: Աստ ծնաւ զորդի իւր զՍիսակ, զայր սէգ և անձնեայ, բարեգեղ, կորովաբան և գեղեցկագեղն: Սմա զմեծ մասն ընչից իւրոց տուեալ և ծառայս անձինս բազումս՝ սահմանս հատանէ նմա ժառանգութեան ի ծովէն ընդ արևելս մինչև ցդաշտ մի, ուր գետն Երասխ հատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խոխոմս ձիզս և նեղս, ահագին զնդնչմամբ իջանե ի դաշտն: Աստ բնակեալ Սիսակ՝ լնու շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ. և զաշխարհն կոչէ իւրով անուամբն Սիւնիք, այլ Պարսք յըստակագույնս ևս Սիսական կոչեն: Ի սորա ծննդոց աստ ուրեմն Վաղարշակ, որ առաջին ի Պարթևաց արքայ Հայոց, գտեալ արս անուանիս՝ տեարս աշխարհին կարգ՝, որ է Սիսականդ ազգ, և զայս առնէ Վաղարշակ՝ ի պատմութենէն ստուգեալ»[6]:

Մովսես Խորենացու երկում կա մեկ այլ տեղեկություն ևս. «Յետ պատերազմին Արշակայ ընդ Մակեդոնացիս և ունելոյ զԲաբելոն և զարևելս և զարևմուտս Ասորեստանի՝ միաբանէ և Վաղարշակ զօր բազում յԱտրպատական՝ և ի Հայոց, որ ի միջոցի աշխարհիս, արս անուանիս և քաջս, և զկոչեցեալն Բագարատ, և որք ընդ նովաւ քաջք, և ծովեզերեայսն մանկունս, որք ի Գեղամայ և ի Քանանացւոց, և Շարայի ծնունդք և Գուշարայ և առ թեր Սիսակեանսն, և զԿաղմեանսն և զնոցա մերձաւորսն»[7]:

Արժանահիշատակ է, որ Գեղամի սերունդների մասին խոսելիս պատմիչը նշում է նաև նրանց զբաղեցրած տարածքը: Մեկ այլ տեղեկության համաձայն, նույն տարածքը հանդես է գալիս որպես հայ էթնոսով բնակեցված երկրամաս՝ Հայաստանում, Արշակունիների հաստատման ժամանակ: Մովսես Խորենացին գրում է. «Եւ յարևելից կողմանէ, զեզերբ հայկական խօսիցս, կողմնակալս բիւրաւորս զերկուս ի ցեղից տանց նահապետութեանց, զՍիսակեանս և որ ի Կաղմեայ տանէն, զորոց զանուանսն ի միում ի յառաջագունից ասացեալ ճառիցն կարգեցաք:

Յետ սորա մեծ և անուանի և բազմաբիւր զարևելիս հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր: Բայց զայս գիտեա, զի զցեղս զայս մեծ և անուանի մոռացումն եղև մեզ յառաջնումն մատնեին յիշատակել, զգունդն որ ի Սիսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք, զի աղու ձայնէին զնա: Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ կարգեցաւ կողմնակալ բիւրաւոր ի Պարթևէն Վաղարշակայ: Ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն

---

[6] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 40 - 41:
[7] Նույն տեղում, էջ 105 - 106:

Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծաւդէացւոց և Գարգարացւոց իշխանութիւնն»:

Տարածաշրջանում հայ էթնոսի առկայությունը I դարում արտացոլում է իրականության ավելի հին պատկերը: Ս.Տ.Երեմյանի կարծիքով, հայկական պետության հյուսիս-արևելյան սահմանների ամրապնդման միջոցառումները՝ կողմնակալությունների ստեղծումը, որը վերագրվել է Վաղարշակին, իրականացվել է հայոց Վաղարշ II թագավորի կողմից: Հարցին այդ տեսանկյունից մոտենալու դեպքում հայերի բնակեցման շրջանը Մովսես Խորենացու նշած սահմաններում դիտարկվում է Վաղարշ II-ի (186 - 198թթ.) ժամանակաշրջանից: Սակայն և այդ դեպքում տվյալ դրությունը նույն պատճառներով հանգում է ավելի վաղ ժամանակների: Այդ տեսանկյունից միանգամայն արդարացի է Բ.Հարությունյանի տեսակետը. «Սիսակը և Առանը, որոնք ներկայացնում են Սյունիքի, Արցախի և Ուտիքի բնակչությունը, ըստ Խորենացու, սերում են Հայկից՝ հայ ժողովրդի նախահորից, նշանակում է, անվիճելի է, որ արդեն Խորենացու ժամանակ և նրանից առաջ դրանց բնակչությունը եղել է հայկական: Պատմիչի մեկ այլ տեղեկությունն այն մասին, որ Առանի կողմնակալությունը ստեղծվել է «գնդերը հայկական խոսից», վկայում է, որ Կուրի և Երասխի միջագետքը ունեցել է հայ բնակչություն՝ սկսած հնագույն ժամանակներից»[10]:

Իշխանասարի ստորոտում հայտնաբերված հայոց Արտաշես I (մ.թ.ա. 189 - 160թթ.) թագավորի արամեերեն արձանագրությամբ հողաբաժան սահմանաքարը, ինչպես նաև նույն թագավորի այլ արձանագրությունները, որոնք գտնվել են Սևանա լճի շրջանում[11], անհերքելիորեն ապացուցում են, որ Սյունիքը մ.թ.ա. II դ. եղել է հայկական պետության անբաժանելի մասը:

Դասելով Ստրաբոնի (մ.թ.ա. 64/63 թթ. մ.թ. 23/24թթ.) հաղորդումից, Սյունիքն այդ շրջանում բնակեցված էր հայերով: Հարցի հստակեցման համար կարևոր է հետևյալ վկայությունը. «Պատմում են, թե Հայաստանը, նախապես փոքր լինելով, աճել է Արտաքսիասի և Զարիադրիսի միջոցով, որոնք նախկինում եղել են Անտիոքոս Մեծի ստրատեգոսները, իսկ հետագայում, նրա պարտությունից հետո, թագավորել է սա՝ Սոփենեի, Ակիսենեի և Օղոմանտիսի և մի քանի այլ գավառների վրա, նա էլ՝ Արտաշատի շրջակայքում: Երկուսն էլ աճեցին շրջակա ազգերից հողեր գրավելով. Մարերից՝ Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպեդան, Իբերներից՝ Պարիադրես լեռան ստորոտները, և Խորձենեն և Գոգարենեն, որը գտնվում է Կուրի մյուս կողմը, Խալդեաներից և Մոսյունոյկներից՝ Կարենիտիսը և Դերքսենեն, որոնք Փոքր Հայքին սահմանակից են և կամ նրա մասն են

---

[8] Նույն տեղում, էջ 112 - 113:

[9] Ս.Տ.Երեմյան, Վաղարշ 2-րդի քաղաքական հարաբերությունները Հռոմի և Պարթևների հետ, [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1976, N 4, էջ 38-54]:

[10] Б.Арутюнян, Когда отсутствует научная добросовестность [ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ) 1987, N 7, էջ 51]:

[11] А.Г.Периханян, Арамейская надпись из Зангезура, (ՊԲՀ, 1965, № 4, էջ 108 – 128), А.Я.Борисов, Надписи Артаксия (Арташеса), царя Армении (ՊԲՀ, 1946, N 2, էջ 97-107); И.М.Дьяконов, К.Б.Старкова, Надписи Артаксия (Арташеса), царя Армении, նույն տեղում, 1955, N 2, с. 161-177, Г.А.Тирацян, Новонайденная надпись Арташеса, царя Армении (Вестник древней истории, 1959, N1, с 88-90):

կազմում, Կատաոններից՝ Ակիլիսենեն և Անտիտավրոսի շրջանը, Ասորիներից՝ Տամոնիտիսը, ուստի և բոլորը միալեզու են»[12]:

Ստրաբոնի տեղեկությունը խիստ կարևոր է մասնավորապես Արտաշեսյան հարստության հաստատումից առաջ և հետո՝ Մեծ Հայքի թագավորության սահմանները որոշելու, ինչպես և հայ էթնոսի տարածման եզրերը ճշգրտելու տեսանկյունից: Ըստ որում, Ստրաբոնի վկայությունից երևում է, որ երկրի քաղաքական սահմանները եղել են նաև էթնիկական, քանի որ վերամիավորված տարածքների բնակչությունն ունեցել է մեկ ընդհանուր լեզու՝ հայերեն: Դրա պատճառը ոչ թե նվաճումներն էին, այլ դրանց նախորդած ազգակազմավորման գործընթացները, որոնցով «արդեն մեկ հազարամյակ է, ինչ համակվել էր Հայկական լեռնաշխարհը: Նվաճումները քաղաքական ձևավորում տվեցին արդեն էական չափով գոյություն ունեցած էթնիկական այդ իրավիճակին...»[13]:

Արտաշես I-ի նվաճած հողերը երկրի ծայրամասային մարզեր էին: Դրանց թվում Սյունիքը նշված չէ. որը միանգամայն բնական է, քանի որ այն սահմանամերձ երկրամաս չէր[14]: Այդուհանդերձ, Ստրաբոնի հիշատակած Փավնիտիսը (Φαυνιτίσ) նույնացվել է Սյունիքի հետ՝ սրբագրվելով Συνιτισ կամ Σουνιτίσ[15]: Մեկ այլ դեպքում՝ նույն տարածքի անվան տարբերակներն են համարվել ստրաբոնյան Փավնիտիս և Փավենե (տարընթերցում՝ Փանենե) երկրանունները[16]: Իր հերթին ենթադրվել է, թե Փավենե անունը կարող է փոխարինել Փավնիտիսին և ընդունվել Սյունիքի փոխարեն[17]: Արտահայտվել է նաև կարծիք, որ Փավնիտիս անունը ավելի ուշ ժամանակներում պահպանվել է Փառիսոս կամ Քուստիփառնես ձևով՝ որպես Արցախ նահանգի գավառանուն: Միաժամանակ, Փավնիտիսը Սյունիքին համապատասխանելու դեպքում հավանական է համարվել, որ Սյունիքը և Արցախը Ստրաբոնի ժամանակներում կազմում էին մեկ մարզ՝ Փավնիտիս անունով[18]: Մեկ այլ առիթով Փավնիտիսը նույնացվել է Փավենի հետ և համապատասխանեցվել Մարդպետականի տարածքին, իսկ Կոմիսենե մարզը՝ Սյունիքին[19]:

Տվյալ դեպքում ակնհայտ է, որ հարցի նկատմամբ դրսևորվել են տարբեր մոտեցումներ, ուստի անհրաժեշտ է վերստին անդրադառնալ խնդրին:

Հայտնի է, որ Փավնիտիսը, ինչպես և Կասպիանեն ու Բասորոպեդան նվաճվել էին Մարաստանից (Մեդիա-Ատրպատական): Մ.թ.ա. Iդ. երկրորդ կեսին այդ երկրի և Հայաստանի միջև սահմանը, ըստ Պլուտարքոսի, անցել է Արաքս գետով: «Վերջին ճակատամարտից վեց օր անց հռոմեացիները

---

[12] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, Ե., 1981, էջ 196:

[13] Հայ ժողովրդի պատմություն, հ.I, Ե., 1971, էջ 530:

[14] «Ըստ որում, այն գավառները, որոնց սահմանների մասին խոսք կա, բոլորն էլ ծայրամասային են, և հեղինակը տալիս է նրանց ու օտար երկրների շփման սահմանագծերը» (տե՛ս Ա.Շ.Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Ե., 1966, էջ 260):

[15] Հ. Հիւբշման, Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 16-17:

[16] Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Ե., 1940, էջ 123:

[17] Ա. Շ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 261:

[18] Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Ե., 1966, էջ 27:

[19] Բ. Հարությունյան, Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը (ՊԲՀ, 1994, N 1-2, էջ 262-264):

հասան Մարաստանը Հայաստանից սահմանազատող Արաքս գետը»[20]: Ստրաբոնն այդ մասին գրում է. «Վերա ամրոցը գտնվում է Հայաստանը Ատրպատականից սահմանազատող Արաքս գետից 2400 ստադիա հեռու, ինչպես հաղորդում է Դելիուսը՝ Անտոնիոսի մտերիմը, նկարագրելով նրա պարթևական արշավանքը, որին իրեն վիճակվել էր մասնակցել որպես լեգատ»[21]: Նշված դրությունը գոյություն է ունեցել նաև հայկական հողերի համախմբման նախօրյակին, քանի որ Մարաստանից գրված մարզերը տեղադրված էին Արաքսի ստորին հոսանքի աջակողմյան մասում[22]:

Բացի այդ, Ստրաբոնը Հայաստանի երկրամասերի շարքում դասում է Օրքիստենեն[23], որը համարժեք է հայկական Արցախին[24]: Այն նշված չէ նվաճված մարզերի թվում: Հետևաբար, մինչև տարածքային ձեռքբերումներն այն գտնվել է հայկական պետության կազմում:

Ժամանակին Օրքիստենեի սահմաններն անցկացվել են հետևյալ կերպ. արևելյանը և հյուսիսայինը՝ Արցախը աշխարհացույցային Ուտիքից սահմանազատող գծով, հարավայինը՝ Երասխ գետով, իսկ արևմտյանը՝ Մեծ Հայքի Արցախ և Սյունիք աշխարհները միմյանցից բաժանող սահմանագծով[25]: Տվյալ դեպքում ակներև է, որ Օրքիստենեն և աշխարհացույցյան Արցախը տարածքային առումով համընկնում են: Սակայն, միանգամայն հնարավոր է, որ Օրքիստենի սահմաններն անցել են այլ ընագծերով: Մարզը ինաշխարհագրական տեսանկյունից դիտարկելու դեպքում, մեկնակետ ունենալով աշխարհացույցյան Արցախի տարածքը, կարելի է ենթադրել, որ Օրքիստենեն ներառել է Արցախի լեռնաշղթան՝ հարակից մասերով: Այս վարկածը միանգամայն ընդունելի է, քանի որ հաստատվում է Օրքիստենեի հարևանությամբ գտնվող երկու այլ մարզերի՝ Կոմիսենեի և Ցավենեի տեղորոշմամբ, որոնց մասին հույն աշխարհագրագետը գրում է. «Ցավենեն ևս Հայաստանի գավառներից է և Կոմիսենեն և Օրքիստենեն, որ տալիս է մեծաքանակ հեծելազոր»[26]: Կոմիսենեն որոշակիորեն տեղադրվում է Մեավի լեռների հյուսիսային լանջերին[27]: Այն հյուսիս-արևելքից հարել է Արաքսենեի դաշտին, իսկ հյուսիս-արևմուտքից՝ Շակաշենին[28]:

---

[20] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, էջ 289:

[21] Страбон, География в 17 книгах, перевод, статья и комментарии Г.Л.Стратановского, под общей редакцией проф. С.Л.Утченко, редактор перевода проф. О.О.Крюглер, Л., 1964, с. 498.

[22] Ա.Շ.Մնացականյան, նշվ. աշխ., էջ 261 - 262, Բ.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 261:

[23] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, էջ 195:

[24] Հ.Կարագյոզյան, Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները (ԼՀԳ, 1978, N 10, էջ 56 -57):

[25] Բ.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 260, 264:

[26] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, էջ 195:

[27] «Արաքսենեի դաշտը, որով Արաքս գետը հասնում է մինչև Աղվանքի ծայրը և թափվում է Կասպից ծովը և սրա հետ Շակաշենը՝ սահմանակից Աղվանքին և Կուր գետին, հետո Գուգարքը» (Ստրաբոն, էջ 54-55):

[28] Հարցի լուծման համար հիմք է ծառայում Գյամիշ (իմա՝ Գոմեշ) լեռնազանգվածի անունը: Հայտնի է, որ գնդ. gao-maeSa (բարգված gao «արջառ» և maeSa «խոյ» բառերից) անունից ծագում են պհլ. gāvmeS. պրս. gāvmeS, ֆարս. gomiS ձևերը, որոնք բոլորն էլ ունեն «եզնախոյ» նշանակությունը: Հայերեն գոմէշ-ն առաջացել է պհլ. gāvmeS

Ցավենեի տեղադրության հարցում կարևորվում է երկու հանգամանք: Նախ՝ նկատելի է, որ «աշխարհագրագետի երկը Փավենեն անվերապահորեն համարում է Հայաստանի երկրամաս, իսկ Փավնիտիսը՝ մարերից գրված երկիր»[29]: Անվիճելի է նաև, որ բոլոր մարզերը ներկայացված են խմբերով կամ շարքերով:

Ստրաբոնը Կուրի և Արաքսի միջագետքում հիշատակում է սահմանային տարածքների երկու շարք: Առաջինում նշվում են Արաքսենեի դաշտը, Շակաշենը և Գուգարքը, իսկ երկրորդում՝ Ցավենեն, Օրքիստենեն և Կոմիսենեն: Առանձին շարք էին կազմում Արաքսի աջ ափին գտնվող սահմանամերձ մարզերը՝ Կասպիանեն, Ցավնիտիսը և Բասորոպեդան[30]: Վարչատարածքային միավորները կազմում էին սահմանային մարզերի մի շղթա, որի մի օղակն է եղել Ցավենեն: Այն, որպես այդ շղթայի մի մաս, պետք է տեղադրված լիներ Օրքիստենեի և Արաքս գետի միջև: Ընդ որում, ենթադրելի է, թե Ցավենեն գտնվել է լեռնային կամ նախալեռնային գոտում, քանի որ մյուս մարզերը, դատելով նրանց տեղադրությունից, հիմնականում բնաշխարհագրական այդպիսի շրջաններ էին: Ըստ այդմ, Ցավենեն տեղադրվում է Արցախի լեռնաշղթայի հարավարևելյան նախալեռնային հատվածում՝ համապատասխանելով Մեծ Հայքի Ուտիք նահանգի Տրի գավառին[31]: Այս տեղորոշման օգտին է խոսում նաև երկրանունների միջև եղած կապը[32]: Պետք է կարծել, որ Ցավենեն զբաղեցրել է ավելի մեծ

(*գամէշ>գոմէշ) կամ *gomeš.> գոմէշ տարբերակներից (Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. I, Ե., 1971, էջ 575): Այդ բառով է կազմված Կոմիսենե տեղանունը, որին հնչմամբ մոտ են փոխառյալ ասոր. gomiša, քրդ. komiš, ավար. kamyš. նույն իմաստն արտահայտող անվանաձևերը (Հր.Աճառյան, նշվ. աշխ., էջ 575): Ի դեպ՝ kambeč ձևով հանդիպում է որոշ կովկասյան լեզուներում (նույն տեղում), որից և ունենք Կամբեճան (Կամբյուսենե) երկրանունը Կուրի ձախափնյակում: Կամբեճանը եղել է Հայաստանի ամենահյուսիսային մարզերից մեկը (Ստրաբոն, էջ 56-57):

[29] Բ.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 260:

[30] Նույն տեղում:

[31] Նոր տվյալների համաձայն, այդ տարածքում է գտնվել նաև սեպագրական շրջանի Տերիա երկիրը (Հ.Կարագյոզյան, Սեպագիր տեղանուններ, Ե., 1998, էջ 206, ծան. 4):

[32] Ցավենե երկրանվան հետ է առնչվում այն կարծիքը, ըստ որի, Ստրաբոնը, զուգադրելով հայկական Վանատուր աստվածությանը լատինական Ցավնին (Faunus)՝ նրանց անունների և բովանդակության համընկնելու պատճառով, երկրամասի անունը մատուցել է Ցավենե (Fauene) գրությամբ (Բ.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 263): Տվյալ պարագայում, թերևս, առավել նախընտրելի է Տիրի և Ցավնի նույնացումը: Հայտնի է, որ Ցավնը հռոմեական դիցաբանության մեջ դաշտերի, անտառների արոտավայրերի աստվածն էր: Գոյություն ունեին պատկերացումներ նրա՝ ինչպես բազմակիության, այնպես էլ եզակիության մասին: Ցավնի կանացի համապատասխանությունն էր Ցավնան (Fauna, ae) կամ Ցատուան (Fatua, ae), որը հետագայում համարվել է նրա դուստրը՝ հայտնի լինելով որպես Bona Dea: Ցավնը անտառի աղմուկի ժամանակ կամ երազում գուշակություններ էր կատարում: Ընկալվել է նաև որպես երեխաներ առևանգող, հիվանդություններ և մղձավանջներ ուղարկող չար ոգի: Պաշտվել է հատկապես գյուղացիների կողմից՝ համարվելով անասնապահության ու գյուղական կյանքի հովանավոր: Ցավնի պաշտամունքին էր միահյուսված նաև լուպերկալիան՝ պտղաբերության և ինքնամաքրման, գայլերին հոտերից հետ պահելու հովվական տոնը: Այն ժամանակին կապված է եղել գայլի պաշտամունքի հետ, որը հանդես էր գալիս որպես Լուպերկ (Lupus՝ գայլ) աստված: Հռոմում այդ տոնը կատարվում էր փետրվարի 15-ին, Պալատինյան բլրի վրա, որի ընթացքում զոհաբերվում էին շուն և այծ (И.Х.Дворецкий, Латино-русский словарь, М., 1976, с. 418, Мифы народов мира, т. II, М., 1992, с. 555) Ցավնին վերագրվող

տարածք, քան հետագայի Տրի գավառը: Դա ակնհայտ է Ստրաբոնի հիշատակած մարդերի և դրանց համարժեք այլ միջնադարյան գավառների համադրումից:

Հայտնի է, որ անտիկ շրջանի մի շարք տեղանուններում տարբեր առումներով օգտագործվել է պատկանելություն ցույց տվող «իտ» ածանցը՝ հունարենին հատուկ «իս» վերջավորությամբ, որը հանդիպում է նաև Ցամնիտիս երկրանվան մեջ[33]: Քանի որ Ցամնիտիսը Ցավենե տեղանվան մեկ այլ ձևն է, ապա կարելի է եզրակացնել, որ Ցամն-Ապոլոնի (Տիր) պաշտամունքն առկա էր նաև մարերից վերագրավված երկրամասում և մոտակա մարզերում[34]:

Օրբիստենեն, ինչպես երևում է նրա տեղադրությունից, Սյունիքին հարել է արևմուտքից: Իսկ դրանից հետևում է, որ Սյունիքը և հարակից մարդերը (Սևանա լճի ավազանը, Նախճվանը և Գողթնը նույնպես գտնվել են

հատկությունների դիտարկումից երևում է, որ նա իր նմանակներն է ունեցել Հին Աշխարհում: Մասնավորապես որոշ մանրամասներ կարելի է գտնել նրա և հունական Ապոլոնի պաշտամունքների միջև: Ապոլոնը սկզբնապես եղել է անասունների հոտերի պահապան աստված և պատկերվել է ոչխարի տեսքով, այնուհետև դարձել է լույսի աստված, իսկ ավելի ուշ՝ հունական գաղութների վերարնակիչների հովանավորը, ապա և՝ արվեստի, պոեզիայի և երաժշտության աստված: Նա եղել է նաև ապագան կանխատեսող աստված: Ժամանակին մեծ հռչակ էր վայելում Ապոլոնի սրբավայրը Դելֆիքում, ուր քուրմը գուշակություններ էր կատարում (Ա.Կուն, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Ե., 1979, էջ 33, ծան. 1): Հին հայկական դիցարանի աստվածներից Ցամն-Ապոլոնին ավելի մոտ էր կանգնած Տիրը: Այն եղել է արևի աստվածը, որի տաճարը գտնվել է Արմավիրում: Նա հետագայում իր տեղը զիջել է Միհրին, դառնալով երազացույց-երազահան, բրմական գիտությունների դպիր, ուսման և ճարտարապետության աստված (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 902, 904): Ուշագրավ է, որ Արտաշես I-ի օրոք Արմավիրում տեղադրվել է Հայաստան բերված Ապոլոնի արձանը (Մովսես Խորենացի, էջ 122): Քաղաքում եղել են նաև սրբազան ծառեր՝ սոսիներ, որոնց տերևների շարժվելուց հայոց աշխարհում գուշակություններ էին անում (Մովսես Խորենացի, էջ 63-64): Ցամն-Ապոլոնի և Տիրի պաշտամունքներում առկա ընդհանրությունները վկայում են, որ հին Հայաստանում պաշտամունքային զարգացման որոշակի փուլում այդ աստվածությունները նույնացվել են:

[33] Հ.Կարագյոզյան, նշվ. աշխ., էջ 174 - 175:

[34] Նախկին Զանգելանի շրջանում եղել է Տիրի անունով գյուղ (Азербайджанская ССР. Административно-территориальное деление, Баку, 1979, с. 42): Այն տեղադրված էր Արաքս և Ողջի գետերի ջրախառնման անկյունում, Մինչևանից հարավ-արևելք, մի լեռան լանջին, որի ապառաժոտ գագաթին նշմարվում են բերդի ավերակներ (Ղ.Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 283): Բնակավայրը գտնվել է միջնադարյան Սյունիքի Քաշունիք գավառի տարածքում և, բնականաբար, համապատասխանում է Տրեայ գյուղին, որը արձանագրված է Տաթևի վանքի հարկատու գյուղերի հին ցուցակում (Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 519): Տեղանունը ծագումնաբանորեն կապ ունի Տիր աստծո անվան հետ: Ամենայն հավանականությամբ, հեթանոսական շրջանում այդ վայրում եղել է Տիրի պաշտամունքային տաճարը, որից և բնակավայրը ստացել է իր անունը: Այս առումով ուշագրավ է սրբազան ծառերի՝ սոսիների գոյությունը մերձակա Ծավ գետի հովտում: Դրանց առկայությունը Տիրի պաշտամունքային վայրերում պայմանավորում է սոսի ծառի ընկալումը որպես արևի նշանակ հանդիսացող կենաց ծառ: Հատկանշական է, որ Տիր դիցանունից Բագրևանդի շրջանում ունենք Տիրառիճ գյուղի անունը, որը բառացի նշանակում է «Տիրի գյուղ», «Տիրի կացարան» և Սոդքի Տրէստուք գյուղանունը, որն արտահայտում է «Տիրի պարգև» իմաստը (տե՛ս Г.Капанцян, Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Е., 1940, с. 77):

կազմում, Կատառոններից՝ Ակիլիսենեն և Անտիտավրոսի շրջանը, Ասորիներից՝ Տամոնիտիսը, ուստի և բոլորը միալեզու են»[12]:

Ստրաբոնի տեղեկությունը խիստ կարևոր է մասնավորապես Արտաշեսյան հարստության հաստատումից առաջ և հետո՝ Մեծ Հայքի թագավորության սահմանները որոշելու, ինչպես և հայ էթնոսի տարածման եզրերը ճշգրտելու տեսանկյունից: Ըստ որում, Ստրաբոնի վկայությունից երևում է, որ երկրի քաղաքական սահմանները եղել են նաև էթնիկական, քանի որ վերամիավորված տարածքների բնակչությունն ունեցել է մեկ ընդհանուր լեզու՝ հայերեն: Դրա պատճառը ոչ թե նվաճումներն էին, այլ դրանց նախորդած ազգակազմավորման գործընթացները, որոնցով «արդեն մեկ հազարամյակ է, ինչ համակվել էր Հայկական լեռնաշխարհը: Նվաճումները քաղաքական ձևավորում տվեցին արդեն էական չափով գոյություն ունեցած էթնիկական այդ իրավիճակին...»[13]:

Արտաշես I-ի նվաճած հողերը երկրի ծայրամասային մարզեր էին: Դրանց թվում Սյունիքը նշված չէ, որը միանգամայն բնական է, քանի որ այն սահմանամերձ երկրամաս չէր[14]: Այդուհանդերձ, Ստրաբոնի հիշատակած Ցավնիտիսը (Φαυνιτίσ) նույնացվել է Սյունիքի հետ՝ սրբագրվելով Συνιτισ կամ Σουνιτίσ[15]: Մեկ այլ դեպքում նույն տարածքի անվան տարբերակներն են համարվել ստրաբոնյան Ցավնիտիս և Ցավենե (տարընթերցում՝ Ցանենե) երկրանունները[16]: Իր հերթին ենթադրվել է, թե Ցավենե անունը կարող է փոխարինել Ցավնիտիսին և ընդունվել Սյունիքի փոխարեն[17]: Արտահայտվել է նաև կարծիք, որ Ցավնիտիս անունը ավելի ուշ ժամանակներում պահպանվել է Փառիսոս կամ Քուստիփառնես ձևով՝ որպես Արցախ նահանգի գավառանուն: Միաժամանակ, Ցավնիտիսը Սյունիքին համապատասխանելու դեպքում հավանական է համարվել, որ Սյունիքը և Արցախը Ստրաբոնի ժամանակներում կազմում էին մեկ մարզ՝ Ցավնիտիս անունով[18]: Մեկ այլ առիթով Ցավնիտիսը նույնացվել է Ցավենի հետ և համապատասխանեցվել Մարդպետականի տարածքին, իսկ Կոմիսենե մարզը՝ Սյունիքին[19]:

Տվյալ դեպքում ակնհայտ է, որ հարցի նկատմամբ դրսևորվել են տարբեր մոտեցումներ, ուստի անհրաժեշտ է վերստին անդրադառնալ խնդրին:

Հայտնի է, որ Ցավնիտիսը, ինչպես և Կասպիանեն ու Բասորոպեդան նվաճվել էին Մարաստանից (Մեդիա-Ատրպատական): Մ.թ.ա. Iդ. երկրորդ կեսին այդ երկրի և Հայաստանի միջև սահմանը, ըստ Պլուտարքոսի, անցել է Արաքս գետով: «Վերջին ճակատամարտից վեց օր անց հռոմեացիները

---

[12] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, Ե., 1981, էջ 196:

[13] Հայ ժողովրդի պատմություն, հ.I, Ե., 1971, էջ 530:

[14] «Ըստ որում, այն գավառները, որոնց սահմանների մասին խոսք կա, բոլորն էլ ծայրամասային են, և հեղինակը տալիս է նրանց ու օտար երկրների չփման սահմանագծերը» (տե՛ս Ա.Շ.Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Ե., 1966, էջ 260):

[15] Հ. Հիւբշման, Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 16-17:

[16] Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Ե., 1940, էջ 123:

[17] Ա. Շ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 261:

[18] Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Ե., 1966, էջ 27:

[19] Բ. Հարությունյան, Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը (ՊԲՀ, 1994, N 1-2, էջ 262-264):

հասան Մարաստանը Հայաստանից սահմանազատող Արաքս գետը»[20]: Ստրաբոնն այդ մասին գրում է. «Վերա ամրոցը գտնվում է Հայաստանը Ատրպատականից սահմանազատող Արաքս գետից 2400 ստադիա հեռու, ինչպես հաղորդում է Դելիուսը՝ Անտոնիոսի մտերիմը, նկարագրելով նրա պարթևական արշավանքը, որին իրեն վիճակվել էր մասնակցել որպես լեգատ»[21]: Նշված գրությունը գոյություն է ունեցել նաև հայկական հողերի համախմբման նախօրյակին, քանի որ Մարաստանից գրված մարզերը տեղադրված էին Արաքսի ստորին հոսանքի աջակողմյան մասում[22]:

Բացի այդ, Ստրաբոնը Հայաստանի երկրամասերի շարքում դասում է Օրքիստենեն[23], որը համարժեք է հայկական Արցախին[24]: Այն նշված չէ նվաճված մարզերի թվում: Հետևաբար, մինչև տարածքային ձեռքբերումներն այն գտնվել է հայկական պետության կազմում:

Ժամանակին Օրքիստենեի սահմաններն անցկացվել են հետևյալ կերպ. արևելյանը և հյուսիսայինը՝ Արցախը աշխարհացուցցային Ուտիքից սահմանազատող գծով, հարավայինը՝ Երասխ գետով, իսկ արևմտյանը՝ Մեծ Հայքի Արցախ և Սյունիք աշխարհները միմյանցից բաժանող սահմանագծով[25]: Տվյալ դեպքում ակներև է, որ Օրքիստենեն և աշխարհացուցցյան Արցախը տարածքային առումով համընկնում են: Սակայն, միանգամայն հնարավոր է, որ Օրքիստենի սահմաններն անցել են այլ բնագծերով: Մարզը բնաշխարհագրական տեսանկյունից դիտարկելու դեպքում, մեկնակետ ունենալով աշխարհացուցցյան Արցախի տարածքը, կարելի է ենթադրել, որ Օրքիստենեն ներառել է Արցախի լեռնաշղթան՝ հարակից մասերով: Այս վարկածը միանգամայն ընդունելի է, քանի որ հաստատվում է Օրքիստենեի հարևանությամբ գտնվող երկու այլ մարզերի՝ Կոմիսենեի և Ցավենեի տեղորոշմամբ, որոնց մասին հույն աշխարհագրագետը գրում է. «Ցավենեն ևս Հայաստանի գավառներից է և Կոմիսենեն և Օրքիստենեն, որ տալիս է մեծաքանակ հեծելազոր»[26]: Կոմիսենեն որոշակիորեն տեղադրվում է Մուավի լեռների հյուսիսային լանջերին[27]: Այն հյուսիս-արևելքից հարել է Արաքսենեի դաշտին, իսկ հյուսիս-արևմուտքից՝ Շակաշենին[28]:

---

[20] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, էջ 289:

[21] Страбон, География в 17 книгах, перевод, статья и комментарии Г.А.Стратановского, под общей редакцией проф. С.Л.Утченко, редактор перевода проф. О.О.Крюглер, Л., 1964, с. 498.

[22] Ա.Շ.Մնացականյան, նշվ. աշխ., էջ 261 - 262, Բ.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 261:

[23] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, էջ 195:

[24] Հ.Կարագյոզյան, Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները (ԼՀԳ, 1978, N 10, էջ 56 -57):

[25] Բ.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 260, 264:

[26] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, էջ 195:

[27] «Արաքսենեի դաշտը, որով Արաքս գետը հասնում է մինչև Աղվանքի ծայրը և թափվում է Կասպից ծովը և սրա հետ Շակաշենը՝ սահմանակից Աղվանքին և Կուր գետին, հետո Գուգարքը» (Ստրաբոն, էջ 54-55):

[28] Հարցի լուծման համար հիմք է ծառայում Գյամիշ (իմա՝ Գոմեշ) լեռնագագաթի անունը: Հայտնի է, որ զնդ. gao-maeša (բարդված gao «արջառ» և maeša «խոյ» բառերից) անունից ծագում են պհլ. gāvmeš. պրս. gāvmeš, ֆարս. gomiš ձևերը, որոնք բոլորն էլ ունեն «եզնախոյ» նշանակությունը: Հայերեն գոմէշ-ն առաջացել է պհլ. gāvmeš

Ֆավենեի տեղադրության հարցում կարևորվում է երկու հանգամանք: Նախ՝ նկատելի է, որ «աշխարհագրագետի երկը Փավենեն անվերապահորեն համարում է Հայաստանի երկրամաս, իսկ Փավնիտիսը՝ մարերից գրաված երկիր»[29]: Անվիճելի է նաև, որ բոլոր մարզերը ներկայացված են խմբերով կամ շարքերով:

Ստրաբոնը Կուրի և Արաքսի միջագետքում հիշատակում է սահմանային տարածքների երկու շարք: Առաջինում նշվում են Արաքսենեի դաշտը, Շակաշենը և Գուգարքը, իսկ երկրորդում՝ Ֆավենեն, Օրքիստենեն և Կոմիսենեն: Առանձին շարք էին կազմում Արաքսի աջ ափին գտնվող սահմանամերձ մարզերը՝ Կասպիանեն, Ֆավնիտիսը և Բասորոպեդան[30]: Վարչատարածքային միավորները կազմում էին սահմանային մարզերի մի շղթա, որի մի օղակն է եղել Ֆավենեն: Այն, որպես այդ շղթայի մի մաս, պետք է տեղադրված լիներ Օրքիստենեի և Արաքս գետի միջև: Ընդ որում, ենթադրելի է, թե Ֆավենեն գտնվել է լեռնային կամ նախալեռնային գոտում, քանի որ մյուս մարզերը, դատելով նրանց տեղադրությունից, հիմնականում բնաշխարհագրական այդպիսի շրջաններ էին: Ըստ այդմ, Ֆավենեն տեղադրվում է Արցախի լեռնաշղթայի հարավարևելյան նախալեռնային հատվածում՝ համապատասխանելով Մեծ Հայքի Ուտիք նահանգի Տրի գավառին[31]: Այս տեղորոշման օգտին է խոսում նաև երկրանունների միջև եղած կապը[32]: Պետք է կարծել, որ Ֆավենեն զբաղեցրել է ավելի մեծ

(*գաւմէշ>գոմէշ) կամ *gomeš.> գոմէշ տարբերակներից (Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. I, Ե., 1971, էջ 575): Այդ բառով է կազմված Կոմիսենե տեղանունը, որին հնչմամբ մոտ են փոխառյալ ասոր. gomiša, քրդ. komiš, ավար. kamyš. նույն իմաստն արտահայտող անվանաձևերը (Հր.Աճառյան, նշվ. աշխ., էջ 575): Ի դեպ՝ kambeč ձևով հանդիպում է որոշ կովկասյան լեզուներում (նույն տեղում), որից և ունենք Կամբեճան (Կամբյուսենե) երկրանունը Կուրի ձախափնյակում: Կամբեճանը եղել է Հայաստանի ամենահյուսիսային մարզերից մեկը (Ստրաբոն, էջ 56-57):

[29] Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 260:

[30] Նույն տեղում:

[31] Նոր տվյալների համաձայն, այդ տարածքում է գտնվել նաև սեպագրական շրջանի Տերիա երկիրը (Հ. Կարագյոզյան, Սեպագիր տեղանուններ, Ե., 1998, էջ 206, ծան. 4):

[32] Ֆավենե երկրանվան հետ է առնչվում այն կարծիքը, ըստ որի, Ստրաբոնը, զուգադրելով հայկական Վանատուր աստվածությանը լատինական Ֆավնին (Faunus)՝ նրանց անունների և բովանդակության համընկնելու պատճառով, երկրամասի անունը մատուցել է Ֆավենե (Fauene) դրությամբ (Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 263): Տվյալ պարագայում, թերևս, առավել նախընտրելի է Տիրի և Ֆավնի նույնացումը: Հայտնի է, որ Ֆավնը հռոմեական դիցաբանության մեջ դաշտերի, անտառների արոտավայրերի աստվածն էր: Գոյություն ունեին պատկերացումներ նրա՝ ինչպես բազմակիության, այնպես էլ եզակիության մասին: Ֆավնի կանացի համապատասխանությունն էր Ֆավնան (Fauna, ae) կամ Ֆատուան (Fatua, ae), որը հետագայում համարվել է նրա դուստրը՝ հայտնի լինելով որպես Bona Dea: Ֆավնը անտառի աղմուկի ժամանակ կամ երազում գուշակություններ էր կատարում: Ընկալվել է նաև որպես երեխաներ առևանգող, հիվանդություններ և մղձավանջներ ուղարկող չար ոգի: Պաշտվել է հատկապես գյուղացիների կողմից՝ համարվելով անասնապահության ու գյուղական կյանքի հովանավոր: Ֆավնի պաշտամունքին էր միահյուսված նաև լուպերկալիան՝ պտղաբերության և ինքնամաքրման, գայլերին հոտերից հետ պահելու հովվական տոնը: Այն ժամանակին կապված է եղել գայլի պաշտամունքի հետ, որը հանդես էր գալիս որպես Լուպերկ (Lupus՝ գայլ) աստված: Հռոմում այդ տոնը կատարվում էր փետրվարի 15-ին, Պալատինյան բլրի վրա, որի ընթացքում զոհաբերվում էին շուն և այծ (И.Х.Дворецкий, Латино-русскии словарь, М., 1976, с. 418, Мифы народов мира, т. II, М., 1992, с. 555) Ֆավնին վերագրվող

տարածք, քան հետագայի Տրի գավառը: Դա ակնհայտ է Ստրաբոնի հիշատակած մարզերի և դրանց համարժեք այլ միջնադարյան գավառների համադրումից:

Հայտնի է, որ անտիկ շրջանի մի շարք տեղանուններում տարբեր առումներով օգտագործվել է պատկանելություն ցույց տվող «իտ» ածանցը՝ հունարենին հատուկ «իս» վերջավորությամբ, որը հանդիպում է նաև Ցավնիտիս երկրանվան մեջ[33]: Քանի որ Ցավնիտիսը Ցավենե տեղանվան մեկ այլ ձևն է, ապա կարելի է եզրակացնել, որ Ցավն-Ապոլոնի (Տիր) պաշտամունքն առկա էր նաև մարերից վերագրավված երկրամասում և մոտակա մարզերում[34] :

Օրքիստենեն, ինչպես երևում է նրա տեղագրությունից, Սյունիքին հարել է արևմուտքից: Իսկ դրանից հետևում է, որ Սյունիքը և հարակից մարզերը (Սևանա լճի ավազանը, Նախճվանը և Գողթնը նույնպես գտնվել են

հատկությունների դիտարկումից երևում է, որ նա իր նմանակներն է ունեցել Հին Աշխարհում: Մասնավորապես որոշ մանրամասներ կարելի է գտնել նրա և հունական Ապոլոնի պաշտամունքների միջև: Ապոլոնը սկզբնապես եղել է անասունների հոտերի պահապան աստված և պատկերվել է ոչխարի տեսքով, այնուհետև դարձել է լույսի աստված, իսկ ավելի ուշ՝ հունական գաղութների վերաբնակիչների հովանավորը, ապա և արվեստի, պոեզիայի և երաժշտության աստված: Նա եղել է նաև ապագան կանխատեսող աստված: Ժամանակին մեծ հռչակ էր վայելում Ապոլոնի սրբավայրը Դելֆիքում, ուր քուրմը գուշակություններ էր կատարում (Ա.Կուն, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Ե., 1979, էջ 33, ծան. 1): Հին հայկական դիցարանի աստվածներից Ցավն-Ապոլոնին ավելի մոտ էր կանգնած Տիրը: Այն եղել է արևի աստվածը, որի տաճարը գտնվել է Արմավիրում: Նա հետագայում իր տեղը զիջել է Միհրին, դառնալով երազացույց-երազահան, քրմական գիտությունների դպիր, ուսման և ճարտարապետության աստված (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 902, 904): Ուշագրավ է, որ Արտաշես I-ի օրոք Արմավիրում տեղադրվել է Հայաստան բերված Ապոլոնի արձանը (Մովսես Խորենացի, էջ 122): Քաղաքում եղել են նաև սրբազան ծառեր՝ սոսիներ, որոնց տերևների շարժվելուց հայոց աշխարհում գուշակություններ էին անում (Մովսես Խորենացի, էջ 63-64): Ցավն-Ապոլոնի և Տիրի պաշտամունքներում առկա ընդհանրությունները վկայում են, որ հին Հայաստանում պաշտամունքային զարգացման որոշակի փուլում այդ աստվածությունները նույնացվել են:

[33] Հ.Կարագյոզյան, նշվ. աշխ., էջ 174 - 175:

[34] Նախկին Զանգելանի շրջանում եղել է Տիրի անունով գյուղ (Азербайджанская ССР. Административно-территориальное деление, Баку, 1979, с. 42): Այն տեղադրված էր Արաքս և Ողջի գետերի ջրախառնման անկյունում, Մինջևանից հարավ-արևելք, մի լեռան լանջին, որի ապառաժոտ գագաթին նշմարվում են բերդի ավերակներ (Ղ.Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 283): Բնակավայրը գտնվել է միջնադարյան Սյունիքի Քաշունիք գավառի տարածքում և, բնականաբար, համապատասխանում է Տրեայ գյուղին, որը արձանագրված է Տաթևի վանքի հարկատու գյուղերի հին ցուցակում (Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 519): Տեղանունը ծագումնաբանորեն կապ ունի Տիր աստծո անվան հետ: Ամենայն հավանականությամբ, հեթանոսական շրջանում այդ վայրում եղել է Տիրի պաշտամունքային տաճարը, որից և բնակավայրը ստացել է իր անունը: Այս առումով ուշագրավ է սրբազան ծառերի՝ սոսիների գոյությունը մերձակա Ծավ գետի հովտում: Դրանց առկայությունը Տիրի պաշտամունքային վայրերում պայմանավորում է սոսի ծառի ընկալումը որպես արևի նշանակ հանդիսացող կենաց ծառ: Հատկանշական է, որ Տիր դիցանունից Բագրևանդի շրջանում ունենք Տիրառիճ գյուղի անունը, որը բառացի նշանակում է «Տիրի գյուղ», «Տիրի կացարան» և Սոդքի Տրէտուք գյուղանունը, որն արտահայտում է «Տիրի պարգև» իմաստը (տե՛ս Г.Капанцян, Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Е., 1940, с. 77):

հայկական պետության կազմի մեջ, որը որոշվում է Արցախի նկատմամբ նրանց ունեցած աշխարհագրական դիրքով: Տարածաշրջանը ներառել է նաև Կուր գետի աջափնյա այն շերտը, որը կազմել է Մեծ Հայքի Ուտիք նահանգը: Այն, որ Ուտիքը եղել է Հայաստանի մի մասը՝ մ.թ.ա. III դ. վերջին և մ.թ.ա. IIդ. սկզբին, հստակ որոշվել է ուսումնասիրողների կողմից և մեկ անգամ ևս հաստատվում է Ցավենեի աշխարհագրական դիրքով)[35]: Հետևաբար, Կուրի և Երասխի միջագետքը՝ Սյունիք, Արցախ և Ուտիք նահանգների սահմաններում, մտնում էր հայ էթնոսի տարածման շրջանակի մեջ՝ ընդգրկված լինելով Երվանդունիների հայկական պետության կազմի մեջ: Այդ կապակցությամբ ուշագրավ են «Կյուրոպեդիայի» (բովանդակում է մ.թ.ա. VIդ. պատմականորեն հավաստի տեղեկություններ հայերի և Հայաստանի մասին)[36] տվյալները, որոնց համաձայն, հայկական թագավորությունը գտնվել է Մեդիա-Ատրպատականի անմիջական հարևանությամբ[37]: Եթե դրա հետ մեկտեղ ի նկատի ունենանք, որ հայ-մարական սահմանի մի հատվածը ենթադրաբար կարող էր անցնել Երասխ գետով (ինչպես արդեն նշվել է, այդ դրությունը արձանագրվել է Արտաշես I-ի գահակալությանը նախորդող շրջանում), ապա նշված տարածաշրջանում հայ էթնոսը ներկայանում է մ.թ.ա. VIդ.: Դրա հաստատումը գտնում ենք նորագույն ուսումնասիրություններում: Պարզվում է, որ Կուրի և Երասխի միջագետքը դեռևս մ.թ.ա. VIII - -VIIդդ. ունեցել է հնդեվրոպական ծագում ունեցող բնակչություն[38]: Նրա գերակշռող մասը կազմել են հայկական ցեղերը, որոնք գտնվում էին կոնսոլիդացման և պետականության ձևավորման փուլում[39]:

Այսպիսով, մեզ հետաքրքրող տարածքի (Սյունիք և Հարակից մարզեր) վերաբերյալ եղած տվյալների ուսումնասիրության շնորհիվ գալիս ենք այն եզրակացության, որ հայ էթնոսը այստեղ գոյություն է ունեցել դեռևս հնագույն ժամանակներից:

---

[35] А.П.Новосельцев, К вопросу о политической границе Армении и Кавказской Абании в античный период (Кавказ и Византия, 1979, N 1, с. 11-16). Ստրաբոնի տեղեկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ «համենայն դեպս, հայ-աղվանական սահմանը, Կուրի և Աղստևի, Կուրի և Ալազանի ջրախառնման վայրերի միջև գտնվող հատվածում, անցել է Կուրից դեպի հյուսիս ընկած տարածքով» (Б.Арутюнян, նշվ. աշխ., էջ 42):

[36] И.М.Дьяконов, История Мидии, М.-Л., 1956, с. 350-357.

[37] Ксенофонт, Киропедия, М., 1976, с. 38, 72.

[38] Ս.Տ.Երեմյան, Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ (ՊԲՀ, 1968, N2, էջ 92), Ս.Գ.Պետրոսյան, Մերձևանյան ցեղերի միությունը հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ.թ.ա. IV - Vդդ.) (ՊԲՀ, 1976, N 1, էջ 187 - 197), Հ.Կարագյոզյան, Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, էջ 70 - 71, Ն.Վ. Հարությունյան, Արգիշտի II-ի նորահայտ արձանագրությունը (ՊԲՀ, 1979, N 3, էջ 102), А.Петросян, Отражение индоевропейского корня * uel в армянской мифологии (ԼՀԳ, 1978, N 1, էջ 56-59), Բ.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 265:

[39] Ս.Գ.Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 197:

ТЕРРИТОРИЯ И НАСЕЛЕНИЕ СЮНИКА В ДРЕВНОСТИ И СРЕДНИЕ ВЕКА

А.А.КАРАГЕЗЯН

Резюме

Результаты данных по интересующей нас территории, а также сопредельных провинций позволяют утверждать, что армянский этнос существовал здесь с древнейших времен. Об этом свидетельствуют и результаты новейших исследований, согласно которым население в междуречье Куры и Аракса в VIII –VII вв. до н.э. имело индоевропейское происхождение. Его преобладающую часть составляли армянские племена, находившиеся в стадии консолидации и формирования государственности.